Համեմատ հրամանի տէրութեանդ թուղթս նաւեցի դէպ ի Մադրաս ի ձեռն Շամիրամ աղային, որ նա յայնմանէ առաքեսցէ առ ձեզ։ Նոյն գունակ խնդրեմ ի սիրոյդ, զի կաթոգին ողջոյն սիրոյ իմոյ մատուսցես անծանօթին իմոյ՝ Թադդէոս աստուածիմաստ վարդապետին, որոյ համբաւ հանճարոյ մինչև աստ տարածեալ է։ Յոյս մեծ ունիմ ի տեառնէ, որ զմինդ այդ ի յերկոտասան լրատցի։ Մանաւանդ ողջոյն ձօնեմ այլոց ամենեցուն, որք մտերմաբար ծառայեն տէրութեան քում։

Յաւելում ասել թախծագին դիմօք երեսանկեալ աղաչեմ, զի զթուղթս զայս նաև զայն, զոր յառաջնմէ գրեալն էի ի 1787 զկնի ընթեռնլոյդ և զհանգամանացն տեղեկանալոյդ հրաման արասցես, զի թարգմանիցեն ի ֆրանսիզաց լեզու, զի այլազգիք բազումք են այդր, տեսանիցեն և ընթերցեն։ Նաև մեծամեծք ռուսաց, որք հմուտ են լեզուին այն, հանդերձ թագուհեաւ, գրեթէ ի սիրտ զգալով, ծանիցեն և գթասցեն յիմանալ զցաւ և զհիւանդութիւն ազգին քում, մանաւանդ զմեզմ մտերմութիւն նոցին ապաւինեալ առ թագուհւոյն մեծի և իշխանաց նորին։

Զի այսպէս արարեալ ձեր յայտնի տեսանես զքեզ առաւելեալ ի փառս և ի պատիւս, քան զոր ներկայ։ Յայնժամ դիւրաւ և կանուխ յառաջասցի, զոր ինչ խորհուրդ ի սրտի ունիս, առանց թոյլ տալոյ և վաղարկելոյ հաճեալ կատարեսցեն նոքա, վասն որոյ մաղթեմ ի հայրախնամ սիրոյդ, զի մի անտես արասցես զմեզ ի գործոց մերոց և մի երբէք դիցես ի մտի փքացում իմն եղեալ յինէն, և փանաքի[26] հաշուեալ արհամարիցես, աւել հերիք։

Կրկին ողջ լեր ի փառս և ի պարծանս մեր։

Ն[ուաստ] ծ[առայ] է[մին] Յ[ովսէփ] Էմինեանց

1792, յունվար մեկ։ Երկրորդ օրինակ։

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. № 694, փաստաթուղթ ԺԹ։

№ 3

Հովսեփ Էմինի նամակը և նեռգրությունը Հովհաննես Լազարյանին (1791 թ. 24 դեկտեմբերի և 1792 թ. 1 հունվարի)

Ազնուական իշխանաց իշխան աղայ Յովաննէս Աղազարեանին, խանդակաթ սիրով ողջոյն մատչի։

Ի մեծի և անհամար հարստութենէ քումէ և հոչակեալ ընդ ամենայն տեղիս ի պայծառ և բարեբարոյ համբաւոյ քումէ երկայնամիտ լեր ի յօգուտ տառապեալ ազգիդ խնայեալ, ողորմեալ նոցա առ ի ինիլ յիշատակ արձանագիր յաւիտեան։

Քանզի ի լսելն մեր վասն կառուցեալ եկեղեցոյ ի մեծահամբաւ իշխանութենէդ, որ ի Սանկտպետրբուրգ և օծմամբ սրբազան Յովսէփայ առաջնորդի, յոյժ ուրախացաք։ Առաւել ևս ուրախ լինէաք, եթէ գումարեալ և հաստատեալ իցէիք գունդ մի զօրաց յազգէս Հայոց, հրամանաւ ողորմած թագուհւոյն հրովարտակ ընկալեալ և անդրէն սուրհանդակաւ յղեալ ի Ջուղայ, ուր էի յառաջն իբրև ամս ութ, յորմէ երկիցս կամ երիցս ծանարտակ[27] գրեցի առ ձեզ մեծաշուք իշխանութիւնս վասն չունելոյս առ այդր և առ ի ծառայութիւն նորին տ[ի]եղերակալ միահեծան տէրութեան, և ապայ ի վաղուց տեսանէիր զբոլոր Հայաստան ազատ ի ծառայութենէ, ըստ որում գրէ սրբազնագունեղ առաքելաշաւիղ ազնուական Յովսէփ եպիսկոպոս. «Եթէ դու ի միջոցի այնմիկ լինիցէիր ի կողմունս այս, թարց իմիք երկբայութեան փրկութիւն լինելոց էր ազգին մերոյ»։ Եւ այն, որ այսօր այսչափ ոչ զգայաք, որպէս այժմ զգամք վասն դիպմանցն պատահելոց, որ ոչ միայն քեզ եղև